Գ. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ճանաչողական կամ «կոգնիտիվ» գիտակարգը, ինչպես այն հայտնի է աշխարհում, արդի հեռանկարային ու երիտասարդ գիտակարգերից է: Այն արագորեն զարգանում է միաժամանակ մի քանի՝ տեսական ու կիրառական ուղղություններով, ընդգրկելով մարդու և կենդանիների հոգեկան ու շնչանային, ճանաչողական ունակություններին, գործունեության ձևերին ու առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրությունների մի բազմազան ոլորտ: Դրանցից, «The MIT Encyclopedia of Cognitive Sciences» (1999) տվյալների և մեր դիտարկումների ամփոփման համաձայն, կարող ենք նշել կենդանիների նշանային - ճանաչողական գործունեությունն ուսումնասիրող զոոհոգեբանությունը կամ զոոսեմիոտիկան, ընկալման ու ներգործության հորինվածքը քննող նեյրոհոգեբանությունն ու նեյրոլեզվաբանությունը, մտքի փիլիսոփայությունը և հոգելեզվաբանությունը: Վերջինն իր մեջ ներառում է կոգնիտիվ լեզվաբանության կարգի տեսական ու կիրառական ուղղությունների մի շարք, որին են պատկանում լեզվամտածողության ձևավորումը, լեզվաճանաչողական կաղապարումը, լեզվի յուրացումը, երկլեզվությունն ու բազմալեզվությունը, դատական լեզվաբանությունը, էթնոհոգելեզվաբանությունը և այլն: Ավելորդ է նշել, որ ճանաչողական լեզվաբանության կիրառական արժեքը շարունակում է աճել հետաքրքրության ամեն մի նոր ոլորտի առաջացմանը զուգահեռ:

Յուրաքանչյուր մշակույթ իր գիտական մտքի զարգացումներում այս կամ այն չափով անդրադառնում է իմացության ոլորտի խնդիրներին: Իմացության խնդրին հայ գիտական մտքի անդրադարձումների նախապատմությունը քննելիս, թերևս անհրաժեշտ է սկսել փիլիսոփայական ու լեզվաբանական մտքի վերլուծությունից: Փիլիսոփաներից առաջինը 5-6-րդ դարերում ապրած Դավիթ Անհաղթն է, որ կրել է նեոպլատոնականության ազդեցությունը: Այդուհանդերձ, նա զարմանալիորեն համատեղել է այդ հայացքներն արիստոտելյան մատերիալիստական իմացաբանական տեսության հետ:

Ճանաչողական հայացքների նրա շարադրանքում դրականորեն հաստատված է մարդու ընկալումների զգացական հիմքը: Բացի այդ, Դավիթ Անհաղթի համոզմամբ, ճանաչողությունը, իբրև գործունեություն, ունի երկու ձև՝ զգայական և բանական: Ժամանակակից մեկնաբանությամբ սրանք մտածողության երկու՝ առօրյա և մտահայեցողական ձևերն են, որոնք էլ ձևավորում են գիտակցության համապատասխան մակարդակները: Չնայած այն բանին, որ

հետևելով դասական փիլիսոփայության ավանդական համոզմունքին, Անհաղթը ճանաչողության ուսումնասիրությունը համարում է փիլիսոփայության մենաշնորհը, նրա հայացքների արդիականությունն ակնհայտ է մեկ այլ առումով. նա փիլիսոփայության գործնական գերխնդիր է դիտում հոգու ճանաչողական հատկությունների ուսումնասիրությունը: Մի կողմից տեսական փիլիսոփայությունը քննում է իրերի էությունն ու կապը (ասել է, թե ընկալման և մտածողության օբյեկտիվ գործունեության հատկությունները), իսկ մյուս կողմից՝ գործնական փիլիսոփայությունը զբաղվում է մարդու բարոյահոգեբանական կատարելագործման խնդիրներով (Սահմանք իմաստասիրութեան, Եր.1960, էջ 156):

Մի կողմ թողնելով Անհաղթի մարդաբանական և բարոյական հայացքները՝ նշենք, որ նրա ճանաչողական դիտարկումները բավականաչափ հարուստ նյութ են տալիս ճանաչողական գիտակարգի հիմնական հասկացությունների և կառուցվածքային պատկերացումների մասին: Հետաքրքիր է, որ ճանաչողական գիտությունների դասակարգման հարցում Անհաղթը «բանական արվեստի» տարրական հիմք է համարել քերականությունը՝ իբրև գիտություն լեզվի մասին, ճարտասանությունը՝ իբրև գիտություն խոսքի մասին, և տրամաբանությունը՝ իբրև գիտություն մտածողության մասին: Այսպիսով՝ կարելի է ասել, որ հայ ճանաչողական մտքի փիլիսոփայական հիմքերը առաջին անգամ ներկայանում են Դավիթ Անհաղթի ստեղծագործություններում:

Հայ փիլիսոփայական մտքի նոր շրջանի ուշագրավ երևույթ է Երվանդ Ֆրանգյանի «Մեր փիլիսոփայական աշխարհայացքը» (Փարիզ, 1929) աշխատությունը: Ժամանակի ազգային գաղափարախոսական ճգնաժամի պայմաններում սեփական սթափ փիլիսոփայական աշխարհայացքի հաստատման անգամ այս ոչ մեծ ձեռնարկումը չէր կարելի անտեսել: Առավել ևս չպետք է անտեսել այն հիմա, երբ մոնիստական դիրքորոշման հիմքերը և զարգացումը գտնում ենք հայ փիլիսոփայական թե՛ անտիկ, թե՛ ժամանակակից մտքի ներկայացուցիչների գործերում:

Իր կուսակցական գաղափարախոսության փիլիսոփայական հիմքերը հաստատելու այս փորձով Ֆրանգյանը իր ժամանակի համար զարմանալի հետևողականությամբ պաշտպանում է փիլիսոփայական մոնիզմի սկզբունքները, սինթեզելով իր ժամանակի փիլիսոփայական մատերիալիզմն ու իդեալիզմը:

Ճանաչողական գիտությունների տեսանկյունից այս աշխատությանը համահունչ, բայց արդեն ավելի խորն ու հանգամանալի հիմնավորումներով զինված մոնիստական հայացքներ են շարադրված Լևոն Աբրահամյանի «Реальность идеального» աշխատության մեջ, ուր գիտակցության և հոգեկան ոլորտների երևույթները իրենց մեկնաբանությունն են գտնում ըստ նույն

սկզբունքների, որոնք պահանջվում է հետևել ֆիզիկական աշխարհի երևույթների մեկնաբանության դեպքում: Այս աշխատությունն արժևորվում է նրանով, որ հոգեկանի և մտածողության ոլորտների գիտական ուսումնասիրության հիմքերն ամրապնդվում և ընդլայնվում են ոչ թե առանց կողմերից որևէ մեկի՝ մատերիալիզմի կամ իդեալիզմի ժխտման, այլ այդ երկու մոտեցումների տրամաբանական փոխհամալրման ճանապարհով: Եվ հեղինակն իրավացիորեն կարևորում է իրականության հոգեկան ու նյութական ոլորտները նշանակությունների աշխարհում: Իսկ սա ուղի է դեպի ճանաչողության համակարգային դրսևորումները մարդու հոգևոր-նշանային, խոսքային և առարկայական գործունեության աշխարհը:

Լեզվի փիլիսոփայական ըմբռնման ընդարձակ մեկնաբանություն, մասնավորապես լեզվական աշխարհայացքի հիմնախնդրի հանգամանալից վերլուծություն է ներկայացված Գևորգ Բրուտյանի «Փիլիսոփայությունը և լեզուն» աշխատության մեջ: Ուշագրավ է, որ հեղինակն, ի թիվս այլ խնդիրների, կարևորել է աշխարհի լեզվական արտացոլման ազգային առանձնահատկությունները նշելով, որ քերականական, շարադասական ու հատկապես բառիմաստային կառույցները տվյալ լեզվամշակութային իրականությունից դուրս գտնվողի համար կարող են անտրամաբանական թվալ: Սակայն, ինչպես նկատում է Գ. Բրուտյանը, «անտրամաբանականության» երևույթը իր մեջ լրացուցիչ (իմա՝ վերաբերյալի արժեքային ու առույթային նշանակության – Գ.Հ.) տեղեկություններ է պարունակում, որը ինչ-որ չափով փոփոխում է բառի հասկացական բովանդակությունը: Այժմ արդեն հայտնի է, որ լեզվաբանական հարաբերականության հարցի շուրջ վիճաբանությունները հանգեցին այն եզրակացությանը, որ մարդու հոգեկանը, գործելով խնայողության և լրացման սկզբունքներով, վերջին հաշվում ապահովում է իրականության գիտակցական արտացոլման համարժեքությունը ապահովելով գոյապահպանությանն անհրաժեշտ համապատասխանության պայմանը: Սրանով են բացատրվում ոչ միայն լեզվական, այլև տարբեր ազգերի մշակութային արժեքների ու նշանակությունների տարբերակվածության փաստերը, համընդհանուր հասկացությունների իմաստային ծավալների փոփոխականությունն ըստ ժամանակատարածային փոփոխակների:

Հայ հոգեբանության մեջ հոգեկանի և գիտակցության հիշարժան ուսումնասիրություններ են կատարել Լ.Ա. Օրբելին և Ա.Ա. Մեհրաբյանը: Վերջինս երկու մեծ մենագրություն է նվիրել գիտակցության և անձի հոգեբանության հարցերին: Իհարկե, նրա աշխատությունները հիմնականում հոգեպաթոլոգիային և հոգեբուժության հարցեր են շոշափում, սակայն դրանք պարունակում են նաև մի շարք տեսական հարցադրումներ համընդհանուր ճանաչողության, անձի և նրա գիտակցության զարգացման փուլերի մասին: Մասնավորապես,

վերլուծելով փիլիսոփայության դասականների տեսակետները հոգու և գիտակցության, անձի զարգացման մակարդակների մասին՝ Ա. Մեհրաբյանը տարբերակում է անձի զգայական ընկալման, մտածողական - տրամաբանական, սուբյեկտիվ ֆիզիկական և հոգևոր ինքնատիրապետման, վերջապես բանական - բարոյական զարգացման մակարդակները: Ներկայացվող խնդրի առումով արժեքավոր է նրա «Ճանաչողության և զգացմունքի դիալեկտիկա» աշխատությունը, որը պարզաբանում է ճանաչողության՝ իմաստաստեղծման հոգեբնախոսական հիմքերը: Նրա առաջադրած դրույթները կարող են հայեցակարգային նշանակություն ունենալ հայ կոգնիտիվ գիտության զարգացման համար:

Հայ մշակութաբանական միտքն աշխարհին ներկայանում է է. Մարգարյանի մշակույթի տեսությամբ, որը լայնորեն կիրառվում է որպես մարդաբանական և մշակութային ժառանգականության հայեցակարգային հիմք: Այն ձևավորում է մշակույթի՝ իբրև գոյապահպանական համակարգի հայեցակերպը, լեզվի՝ իբրև հոգևորի մշակութային ցուցիչի նշանակությունը: Մշակույթի՝ իբրև լեզվի և արտալեզվական գործունեության միջավայրի նկատմամբ համակարգային այս մոտեցումն է, որ հիմք է ստեղծում լեզվամշակութային միավորի գաղափարը զարգացնելու, մարդու ճանաչողությունն ու հոգեկանը նրա խոսքային գործունեության դրսևորումներում ուսումնասիրելու գիտական եղանակներ ապահովելու համար:

Լեզվի և արտալեզվական իրականության դիալեկտիկան, որի կենտրոնում մարդու անհատական և հասարակական զարգացումն է, է. Աթայանի «Լեզուն և արտալեզվական իրականությունը» աշխատության լեզվափիլիսոփայական քննության առարկան է: Հեղինակը ձևակերպում է լեզվագոյացությունների և արտալեզվական իրականության եռաստիճան (վիրտուալ, ակտուալ, ռեալ) համակարգը: Արտալեզվական իրականությունը դիտարկվում է իբրև լեզվամտածողական ակտիվացման անսպառ շտեմարան, լեզվական իրականությունը՝ իմաստաստեղծման ոլորտ, իսկ խոսքալեզվական իրողությունը ներկայանում է որպես կեցության ու կայացման՝ անհրաժեշտ նորմայի և ազատ ոճական միասնություն: Խոսքային գործունեությունը մի համակարգ է, ուր ստորոգումը, ներկայացումը, հաղորդակցումը կայանում են իրադրական դաշտում: Եվ տեղ թողնելով լեզվական դաշտի անկանխատեսելի իրականացումների ու ինքնաիրականացումների համար է. Աթայանը, փաստորեն, ստեղծագործական հավանականության գործոնը մտցնում է իր հայեցակարգային կառույցի մեջ: Հիրավի, բաց համակարգի առավելությունը զարգացման հնարավորությունն է:

Իր բնույթով եզակի է է. Աթայանի վերջին աշխատություններից մեկը՝ «Болезнь здоровых» (1993), որն ուղղակիորեն վերաբերում է հոգեկանի և գի-

տակցության իմաստային - գործառական հարաբերություններին: Նախընտրելով գիտական սահմանակափակումներից ազատ շարադրանքի ոճը, հեղինակը հանդես է գալիս հոգելեզվաբանական գիտելիքի հսկայական ծավալով: Այստեղ կիրառված է «Քննիր խախտումները օրինաչափությունները ճանաչելու համար» սկզբունքը, որի շնորհիվ էլ արդեն կարելի է այդ գրքույկում սահմանազատել արդի ճանաչողական գիտակարգի մի ամբողջ շարք պրոբլեմներ, դրանց նկարագրություններ ու բնութագրումներ:

Աշխարհայացքային դիրքորոշման առումով վերոհիշյալ հայեցակարգերին ներդաշնակ է հայ նորագույն լեզվաբանական տեսությունը, որը հոգեկանի լեզվական ու նշանային դրսևորումներին տալիս է սուբստանցիալ մոնիստական (Գ. Ջահուկյան) հիմնավորում: Ավելին՝ հայ նորագույն լեզվաբանական միտքը ընդհուպ հագեցրեց լեզվական գիտակցության հոգելեզվաբանական, էքսոհոգելեզվաբանական ուսումնասիրության հնարավորությունը:

Գ. Ջահուկյանը համընդհանուր լեզվաբանական իր տեսության և կաղապարի գործառության սկզբունքների շարադրանքի (1999) ընթացքում այս առիթով նշում է, որ ի տարբերություն կառուցվածքային լեզվաբանության, սուբստանցիոնալ լեզվաբանությունը առանձնացնում է լեզվի էության բացահայտման համար դրա սահմաններից դուրս գալու անհրաժեշտությունը: Լեզուն ստեղծված է և գործում է մարդու հոգեկան, հուզական, մտավոր և կամային մղումների արտահայտության համար: Այն կոչված և ուղղված է իրականության կողմից և իրականությանը: Այն իր խոսքային արտահայտության շնորհիվ դառնում է իրականության փաստացի ածանցյալը և հոգևոր որակ կրող մասը: Ուրեմն համընդհանուր լեզվաբանական տեսությունը իր համակարգային ամբողջականության շնորհիվ տեսական և մեթոդաբանական հիմք է ապահովում հոգելեզվաբանական տեսության զարգացման համար:

Սուբստանցիոնալ լեզվաբանական տեսությունը իր հիմնական սկզբունքներից բացի (նյութեղենություն, միասնականություն, մոնիզմ, խնայողություն), նյութական աշխարհի հատկությունները հստակորեն տարբերակում է դրա գիտական ճանաչողության միջոցներից: Այս տարբերակումը էական նշանակություն ունի *մտածողության օբյեկտ* և *միջոց* հասկացությունների գործառական տարբերակման համար: Համապատասխանաբար, լեզվաբանական կաղապարի կառուցվածքը ներկայացնելիս, Գ. Ջահուկյանը ֆիզիկական օբյեկտների բնութագրումից բացի տալիս է հոգևոր օբյեկտների տարբերակիչ հատկանիշները, այսինքն՝ կաղապարը ներառում է և՝ ֆիզիկական օբյեկտի, և դրա հոգեկան արտացոլման հատկությունները բնութագրելու հնարավորությունը:

Այսպիսով՝ վստահորեն կարելի է հաստատել, որ հայ գիտական ավանդության մեջ կան գիտակցությունն ու հատկապես դրա լեզվական դրսևորումներն ուսումնասիրող լուրջ աշխատություններ, որոնք ճանաչողական բնագա-

վառի համաշխարհային նվաճումներին զուգահեռ և դրանց թվում կարևոր են հայ լեզվաբանական նորագույն ուղղությունների առաջընթացի համար, սահմանում են գիտակցության հետազոտության արդի փուլի մեթոդաբանական հիմքերը:

Գ. Ր. Օգանեսյան

Научные предпосылки и развития когнитивной лингвистики в Армении

Резюме

Когнитивная лингвистика одна из модных и перспективных дисциплин. Она бурно развивается в некоторых теоретических и практических направлениях одновременно. В истории армянской науки существует ряд фундаментальных исследований, которые создают научные предпосылки для дальнейшего развития когнитивной лингвистики в Армении. В статье рассматриваются подходы в области философии такие имена, как Давид Анахт, Е. Франгян, Л. Абраамян, Г. Брутян, в психологии - Л. Орбели, А. Меграбян, в культурологии - Э. Маркарян, в лингвистической философии — Э. Атаян, в лингвистике — Г. Джаукян. Разные подходы в формате отдельных дисциплин способствуют развитию когнитивной лингвистики, как новой дисциплины научной области.

G. HOVHANNISYAN

Academic Premises for the Development of the Cognitive Discipline in Armenia

Summary

Cognitive science is one of the newest disciplines in the world, which rapidly develops a number of theoretical and applied perspectives. Armenian science has developed premises and conceptual traditions for the development of Cognitive Linguistics. Famous works by Armenian scientists in the spheres of philosophy (D. Anhaght, E.Franguyan, L. Abrahamyan, G. Brutyan), particularly, language philosophy (E. Atayan), psychology (L. Orbeli, A. Mehrabyan), culturology (E. Margaryan) and linguistics(G. Jahukyan) are presented in the article.